

Գործարար շահերի պաշտպանության ցանցի տեղեկատու

Իրադարձություններ/Նորություններ/Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ

ԻՐԱԿԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Գործարարի շահերի պաշտպանության ցանցի հզորացմանը նվիրված ծրագիր

Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ սեմինար

Մաքսային ներկայացուցչության կազմակերպում Պետեկամուտների կոմիտեի Մաքսային մարմնի հետ գործընկերության շրջանակներում թեմայով սեմինար

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԶՈՐՐՈՐ ԳՈՒՄԱՐՍԱԿ ՅՈՒՆԵՐՈՐԴ ՆԱՏԱՇՐՋԱԿԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐՎԱԾ ՕՐԵՆՍՊՐԱԿԱԿԱՆ ԱՆՍԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

«Փոքր եւ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
15.01.2010

27.04.2010 - Ընդունվել է առաջին ընթերցմամբ

Գործարար Շահերի պաշտպանության ցանցի հզորացում

Գործարարի շահերի պաշտպանությունը գործարար հատվածի նկատմամբ պետական քաղաքականության ձեռավորման եւ կիրառման վրա ազդելու գործընթաց է:

Ընթացիկ տարվա ապրիլից «Օտարերկրյա ներդրումների եւ համագործակցության ստացիացիան» իրականացնում է գործարարի շահերի պաշտպանության ցանցի զարգացմանը նվիրված ծրագիր: Ցանցը ստեղծվել է 2009թ.՝ նպատակ ունենալով գործարար հանրության ձայնը հասանելի դարձնել պետական մարմիններին: Ցանցի գործունեության հաջորդ քայլն է. հանդես գալ որպես կարող կառույց՝ ավելի արդյունավետ իրականացնելու փոքր եւ միջին գործարարության ոլորտի իրենց շահառուների շահերի պաշտպանությունը:

Ցանցի աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով ցանցի անդամների համար կկազմակերպվի սեմինար՝ ուղղված ցանցի շահերի պաշտպանության ինստիտուցիոնալ շրջանակների որոշմանը, ցանցի դերին, առաքելությանը: Կմշակվեն ցանցի աշխատանքային ընդհանուր դրույթներն ու ուղղությունները: Ցանցը, մասնավորապես, պետք է կենտրոնանա մարզերից նոր անդամների ներգրավմանը, հնարավորություն ընձեռնելով նրանց բարձրացնելու տեղի գործարար համայնքի խնդիրները: Դասընթացը կանցկացվի «Միջազգային Մասնավոր Ձեռներեցության Կենտրոնի» Ռուսիայի մասնաճյուղի մասնագետների կողմից: Սեմինարի ընթացքում կներկայացվի տարածաշրջանի այլ նմանատիպ նախաձեռնություններից քաղած դասերը եւ լավագույն փորձերը, ինչպես նաեւ Ռուսիայի, Մոլդովայի եւ Մոնտենեգրոյի կոալիցիաների ստեղծման փորձերը: Նման օրինակները կօժանդակեն Ցանցի անդամներին՝ որոշելու Հայաստանում «Գործարարի շահերի պաշտպանության ցանցի» ինստիտուցիոնալ շրջանակները:

«Փոքր բիզնեսից եկած ամեն մի ահագանգ դառնալու է լուրջ քննարկման առարկա» խոստացել է վարչապետ Տիգրան Սարգսյանը Ստուգումներ-հարկային մուտքեր արդյունավետությանը վերաբերող ելույթում:

Կառավարության միտքը սկետային առաջ վարչապետ Տիգրան Սարգսյանն անդրադարձել է նախորդ միտքի ժամանակ իր հայտնած տեղեկությանը, որ ուսումնասիրություններ են կատարվում 2008-2009-թթ. հարկային մարմինների կատարած ստուգումների արդյունավետության վերաբերյալ, քանի որ բազմաթիվ բողոքներ են ստացվել, որ ստուգումների քանակը փոքր եւ միջին ձեռնարկություններում չի նվազել: Նա նշել է, որ պատրաստվել է տեղեկանք, որի ցուցանիշները մտահոգիչ են: «Հարկային մարմինների կատարած հարկային ստուգումների ընդհանուր քանակը 2009թ. ավելացել է 82 տոկոսով, մինչդեռ ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարները նվազել են 25 տոկոսով: Հասկանալի է, որ մեր ռազմավարության հիմքում ընկած էր այն սկզբունքը, որ պետք է նվազագույնի հասցնել շփումները հարկ վճարողների հետ եւ հիմնականում աշխատել ռիսկերի վրա հիմնված վերահսկողությամբ, ամհանգստացնել միայն այն հարկատուներին, որոնք չեն կատարում իրենց պարտավորությունները», ասել է վարչապետը եւ շարունակել մանրամասներ հաղորդել: Համաձայն դրանց, «ցուցանիշների մեջ կան շեղումներ. ստուգումների քանակը՝ 82 տոկոսով, այդ թվում՝ խոշոր հարկատուների մոտ՝ 30 տոկոսով, մինչև 58 մլն դրամ շրջանառություն ունեցող հարկատուների մոտ՝ 70 տոկոսով, իսկ մյուս բոլոր հարկատուների մոտ՝ 250 տոկոսով: Միեւնույն ժամանակ հարկատուների երեք խմբերի ստուգումների լրացուցիչ առաջադրված գումարները նախորդ տարվա հետ համեմատած նվազել են 2-3 անգամ»:

Ըստ Տիգրան Սարգսյանի, ստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ գումարներ-վճարված հարկեր հարաբերակցությունը խոշոր հարկատուների մոտ 4 անգամ պակաս է, քան մյուս բոլոր հարկատուների մոտ: Ընդ որում, այդ տարբերությունը 2008-ին աճել է 3,8 անգամ, 2009թ.՝ 4,6 անգամ: «Այսինքն ստացվում է, որ մենք խոշորների վերաբերյալ ավելի մեղմ մոտեցումներ ունենք, քան՝ փոքրերի», ասել է վարչապետը: Միեւնույն ժամանակ, ըստ այդ տեղեկանքի, յուրաքանչյուր ստուգմամբ մեկ հարկատուին առաջադրված գումարները, հարկատուից հավաքագրված հարկերի հետ համեմատության մեջ, 325 խոշոր հարկատուների մոտ ոչ միայն պակաս են ավելի քան 50 անգամ, քան մյուս հարկատուների մոտ, այլ նաեւ 2009թ. նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշը նվազել է մոտ 40 տոկոսով: Սա այն դեպքում, երբ նշված ժամանակահատվածում մյուս բոլոր հարկատուների մոտ այդ ցուցանիշները

2010թ. ապրիլի 15-16-ը Քաղաքական եւ իրավական խորհրդատվության հայելովրդական կենտրոնը (AEPLAC) ԵՄ խորհրդատվական խմբի հետ համատեղ, Երեւանի առետրա-արդյունաբերական պալատի եւ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ կազմակերպել է առաջին երկօրյա աշխատանքային սեմինարը Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ: Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի շրջանակներում Հայաստանը պարտավորություն է ստանձնել ապահովելու մտավոր սեփականության իրավունքների (ՄՄԻ) ԵՄ մակարդակին համարժեք պաշտպանություն: Չնայած այս ոլորտում ԵՄ օրենսդրության ներդաշնակեցման գործընթացում արձանագրված ձեռքբերումներին՝ Հայաստանը դեռևս թերաճում է ՄՄԻ պաշտպանության գործում, հատկապես ներքին շուկայում կեղծարարության և հեմոթեյան դեմ պայքարի հարցում: Միջազգային ուսումնասիրությունները, (օրինակ Համակարգչային ծրագրերի հեմոթեյան վերաբերյալ 6-րդ գլոբալ տարեկան ուսումնասիրությունը), Հայաստանում բացահայտեցին ՄՄԻ պաշտպանության բավականին ցածր մակարդակ: Օրենքի կիրարկման համար պատասխանատու մարմինները (նստիկանություն, դատարաններ), ինչպես նաև մաքսային համակարգն ու պետական կարգավորիչ այլ մարմիններ հիմնականում իներտ են ՄՄԻ պաշտպանության հարցում: Հետևաբար, Հայաստանում ՄՄԻ պաշտպանությանն ուղղված ջանքերը պետք է այնպես ուղղորդել, որպեսզի պետությունը լիարժեք կարողանա իրականացնել Գործընկերության և համագործակցության համաձայնագրով ստանձնած պարտավորությունները և նախապատրաստվի ԵՄ հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (ԽՀԱԱՀ) շուրջ բանակցություններին:

ՄՄԻ վերաբերյալ սեմինարի մասնակիցները ներկայացրել են շահագրգիռ կառույցների լայն շրջանակ հանրային և մասնավոր հատվածներից՝ խթանելով երկխոսությունը մասնավոր սեփականության իրավունքի գրանցման և պահպանման, վեճերի կարգավորման գործընթացի և դրա հայաստանյան փորձի, ՄՄ իրավունքի կիրարկման առանձին դեպքերի վերաբերյալ: Սեմինարի ընթացքում ներկայացվել են Հայաստանում կեղծարարության և հեմոթեյան մակարդակի գնահատման արդյունքները՝ իրականացված անկախ հետազոտության հիման վրա: Հետազոտությունն իրականացվել է AEPLAC-ի կողմից 2009թ. դեկտեմբեր - 2010թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում Մարդկային զարգացման միջազգային կենտրոն ՀԿ և ԵՄ խորհրդատվական խմբի համագործակցությամբ: Ենթադրվում է, որ հետա-

Հայաստանի Հանրապետությունում ԵՄ Խորհրդատվական խումբը Միջազգային ֆինանսական կորպորացիայի հետ համատեղ «Արթուրս Ադվերան Ռիզորթ» հանգստյան տանը, 2010թ. ապրիլի 16-ին և 17-ին կազմակերպել է սեմինար Մաքսային ներկայացուցչության կազմակերպում Պետկամտների կոմիտեի Մաքսային մարմնի հետ գործընկերության շրջանակներում թեմայով:

2008թ. ամռանը կայացած փաստա-հավաք առաքելության ընթացքում Եվրոպական հանձնաժողովը պարզել է, որ մաքսային ռազմավարության կարևոր մաս է կազմում մաքսային բրոքերների ուսուցումը, և այս ուղղությամբ հանձնաժողովն ակնկալում է տեսնել շարունակվող գործողություններ: Ի լրումն, Պետական եկամուտների կոմիտեի 2008-2012թթ. մաքսային վարչարարության ռազմավարությունը նախատեսում է «մաքսային աշխատակիցներին զինել մասնագիտական գիտելիքներով և ապահովել համապատասխան ուսուցմամբ», ինչպես նաև «մշակել մաքսային բրոքերների որակավորման ընթացակարգ»:

ԵՄ Խորհրդատվական խումբը համաձայնել է շարունակական աջակցություն տրամադրել այս ուղղությամբ, և այս սեմինարի կազմակերպումը հանդիսանում է այդ հեռահար նպատակին հասնելու ջանքերի մաս: Որպես սկիզբ, ցանկալի է կառուցողական երկխոսություն հաստատել մաքսային մարմնի և բրոքերների միջև, ինչը վերջիվերջո կհանգեցնի արդյունավետ հավատարմագրման և ուսուցման գործընթացի: Նաև շատ կարևոր է գործարար համայնքի ակտիվ ներգրավումը, որը մաքսայինի հետ գործաբերում հաճախ ներկայանում է բրոքերի միջոցով:

Սեմինարն անց է կացրել մաքսային գործակալներին և բրոքերներին ներկայացնող CONFIAD միջազգային կազմակերպությունը, որը փորձել է բովանդակալից երկխոսություն հաստատել մաքսային պաշտոնյաների, բրոքերների, առևտրի ոլորտի ներկայացուցիչների և միությունների միջև՝ ներգրավված բոլոր կողմերի միջև պրոֆեսիոնալ հարաբերություններ հաստատելու առավելությունների վերաբերյալ: Սեմինարի հատուկ նպատակներն էին՝

- Մասնակիցներին տեղեկացնել մաքսային ներկայացուցչությանն առնչվող ԵՄ ստանդարտների և գործելակերպի մասին
- Ներկայացնել ժամանակակից և կարողունակ մաքսային ներկայացուցչության նշանակությունը գործարարների, մաքսայինի և ընդհանրապես տնտեսության համար
- Ներկայացնել մաքսային գոր-

մնացել են գրեթե նույնը: Այս առումով, Տիգրան Սարգսյանի կարծիքով, քննադատության հիմնական սլաքը պետք է ուղղել դեպի ֆինանսների նախարարություն, որովհետև ֆինանսների նախարարությունը պետք է պատասխանատու լինի քաղաքականության համար: «Կարծում եմ, ֆինանսների նախարարության դերակատարությունը պետք է ավելանա, որովհետև մեր ստանդնաժ թեֆորմների ժամանակացույցը, ինչի մասին արդարացիորեն խոսում են ձեռներեցները, չի կատարվում», եզրակացրել է վարչապետը, նշելով, որ բիզնեսի համար ստեղծել բարենպաստ միջավայր միայն մեր մակրոտնտեսական բարելավմամբ չի կարող լինել: «Իսկ ստուգումների քանակն ավելացնելով՝ մենք միկրոմիջավայր չենք բարելավում: Մենք ընդամենը ավելացնում ենք դժգոհությունը տասնյակ հազարավոր ձեռնարկությունների, դժգոհություն պետության նկատմամբ, որովհետև մենք չենք կատարում մեր խոստումը»:

գոտությունը մեծապես նպաստել է բոլոր շահագրգիռ կառույցների (գործադիր մարմիններ, իրավատերեր և նրանց ընկերակցություններ, ՀԿ-ներ, ակադեմիական և բիզնես շրջանակներ) իրազեկման մակարդակի բարձրացմանը՝ նպատակ ունենալով որակական նոր մակարդակի հասցնել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը Հայաստանում:

ծակալների մասնագիտական միությունների/համացանցերի նշանակությունը

- Կազմակերպել սեմինարին հաջորդող միջոցառումներ, այդ թվում՝ Հայաստանում ԵՄ և միջազգային լավագույնի փորձի վրա հիմնված մաքսային ներկայացուցչության ստեղծման և հետագա զարգացման գործողությունների ծրագրի/ճանապարհային քարտեզի համատեղ մշակում:

Սեմինարը ընձեռնել է կառուցողական քննարկումների հնարավորություն, որոնք լրացվել են կարճ շնորհանդեսներով:

Հարցազրույց Փոքր ու միջին բիզնեսի հիմնադրամի տնօրեն Ն. Մայիլյանի հետ
«7 օր» 2010-04-19

-Այսօր Հայաստանում փոքր ու միջին բիզնեսի զարգացվածության մակարդակն ինչպիսի՞ն է:

-Եթե դատենք գրանցված բիզնեսների թվից, կարելի է ասել, որ վատ չէ: Սակայն եթե հաշվի առնենք, որ բիզնեսների մեծ մասը գրանցված է, բայց այս կամ այն պատճառով չի գործում, կարելի է ասել, որ զարգացման աստիճանը բավական ցածր է: Մարդիկ խուսափում են մտնել փոքր ու միջին ձեռնարկատիրության դաշտ, որովհետև պատկերացնում են՝ ինչպիսի խնդիրների առաջ են կանգնելու. պետական մարմինների հետ փոխհարաբերությունների բարդություններ, բիզնեսի զարգացման համար նեղ, փոքր հնարավորություններ: Եվ՝ ֆինանսական, և՛ վարչարարության առումով մեծ խնդիրներ կան: Կարելի էր ենթադրել, որ մեր երկիրը պետք է խիստ շահագրգռված լինի, որ փոքր, միջին ձեռնարկատիրությունն առավելագույնս մատչելի և գրավիչ լինի հասարակության համար, որովհետև փոքր ու միջին ձեռնարկատիրությունը լուծում է ոչ այնքան տնտեսական խնդիր, որքան սոցիալական: Այսինքն մարդկանց հնարավորություն է տալիս վաստակել իրենց ընտանիքը կամ իրենց ապրելակերպը պատշաճ մակարդակով ապահովելու համար:

-Ընդհանուր առմամբ ինչպե՞ս եք գնահատում ՀՀ կառավարության վարած քաղաքականությունը, և ինչի՞ն է հանգեցնում այն: Արդյոք փարիսեցիական չե՞ն հայտարարություններն այն մասին, որ փոքր ու միջին բիզնեսին պետք է օգնել:

-Կառավարության հռչակած քաղաքականությունը՝ որպես թղթի վրա շարադրած դիրքորոշում, կարելի է միայն դրական գնահատել: Բայց այն, ինչն իրականում է տեղի ունենում, խիստ տարբերվում է այդ հռչակված քաղաքականությունից: Այսինքն, մեզ մոտ թղթի վրա ամեն ինչ լավ տեսք ունի, իսկ իրական կյանքում շատ ավելի բարդ, դժվար, ոչ գրավիչ է ձեռնարկատիրության համար: Վարչարարությունը խեղդում է մարդկանց: Այն կառույցները, որոնք մարդկանց համար բիզնեսն առավել մատչելի դարձնող ընդհանուր խնդիրը լուծելու նպատակով գործարարների համար պետք է հանդես գան որպես գործընկեր և աջակից, հանդես են գալիս որպես պատժող, հետապնդող, խնդիրներն առավելագույնս դժվարացնող կառույցներ:

-Իսկ այդպիսի գործելաճի բուն նպատակը ո՞րն է:

-Այդ հարցին շատ դժվար է պատասխանել: Չեմ ուզում ենթադրել, որ պետությունը կանխամտածված է անում դա, այսինքն հայտարարում է մի բան, անում է մեկ այլ բան: Կարծում եմ, որ հռչակած քաղաքականության և իրականացվող միջոցառումների ներդաշնակությունը չկա, ինչ-ինչ պատճառով բացակայում է: Միգուցե մեր մենթալիտետի խնդիրն է, միգուցե այլ խնդիրներ կան: Օրինակ, ամեն տեղ խոսում են հավասար մրցակցային դաշտի ապահովման մասին, որ դա կարևոր է, պետք է արվի, օրակարգում է, բայց իրականում մենք ի՞նչ ունենք: Ունենք խիստ անարդար մրցակցային դաշտ, որտեղ ով տանիք, կապեր, միգուցե ֆինանսական միջոցներ ունի, իր հարցերը հեշտությամբ կարողանում է լուծել, իսկ ով նման բաներից զուրկ է, խիստ վարչարարության, պատժամիջոցների, սույժերի և սուզանքների է ենթարկվում: Դրա բացատրության համար կարելի է միայն ենթադրություններ անել, որովհետև իրավիճակի մեկնաբանությունը կամ բացատրությունը որևէ տեղից ստանալ չէք կարող: Դուք կարող եք արձանագրել փաստերը և հետո ենթադրել, թե դրա ետևում ի՞նչ պատճառներ կան:

-Այսօր ուղբաղ կոնկրետ ի՞նչ խնդիրներ ունի, և ի՞նչ է անհրաժեշտ դրանք լուծելու համար:

-Առավելագույնս ազատ թողնել մարդկանց իրենց ձեռներեցությունն իրականացնելու գործում: Չհետապնդել, չկարծել, թե յուրաքանչյուր ձեռներեց անպայման հանցագործ կամ գոնե զեղծարար պետք է լինի: Չևսավորել այնպիսի մթնոլորտ, որը ձեռներեցի համար առավելագույնս նպաստավոր լինի. ստուգումները կրճատել, ստուգել միայն այն դեպքերում, երբ խախտումների առկայության մասին վկայություն կա: Խոսվում է ռիսկային ցուցանիշների չափանիշների վրա հիմնված ստուգումների մեխանիզմի մշակման մասին, բայց մինչև այդ մեխանիզմը մշակվի և գործադրվի, գործարարության որոշակի զանգված դուրս կգա ասպարեզից: Իսկ դա մշանակում է գործազրկության ավելացում, զբաղվածության խնդրի ավելի դժվար իրավիճակ և, բնականաբար, անապահով խավերի ապահովմանն ուղղված խնդիրների ավելի բարդ զանգված պետության համար: Մարդիկ դուրս են գալիս բիզնեսից, դառնում են անապահով, գործազուրկ և դիմում են նպաստ ստանալու համար՝ դժվարացնելով պետության վիճակը, մանավանդ տնտեսական ճգնաժամի պայմաններում: Բազմաթիվ խնդիրներ կան, բայց հիմնականը վարչարարության մեղմացումն ու ստուգումների կանխարգելումն է, գործարարների չիմնավորված կեղեքումը

վերացնելը: Կրկնում եմ՝ մեր կառույցները ոչ թե պետք է հետապնդեն և պատժիչ կառույցների դեր ունենան, այլ նպաստեն քիզնեսի զարգացմանը: Հանգիստ թողնեն: Թո՛ղ մարդիկ աշխատեն, զարգանան: Այսպիսի մի գաղափար կա՝ եթե մեկին հետապնդում են, բնականաբար նա պետք է փախչի: Այդ հետապնդումն առաջ է բերում նաև խախտումներ, վերջիններն էլ իրենց հերթին հետապնդումներ են առաջացնում: Այսինքն, մի օղակի մեջ ենք գտնվում, որի շրջապատույտից, կարծում եմ, պետք է որ առաջինը պետությունը դուրս գա. դադարեցնի հետապնդելը, և մարդիկ հանգիստ աշխատելով, հանգիստ հարկեր վճարելով՝ կարողանան զարգացնել ձեռներեցությունը և լուծել սոցիալական խնդիրը:



AFIC

Օտարերկրյա Ներդրումների եւ Համագործակցության
Ասոցիացիա



Մասնավոր Չեռներեցության Միջազգային Կենտրոն
(ԱՄՆ)